

ԿԱՅԱՍՏԱՆ

Լ Ր Ե Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱՌԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏՐԱԿԱՆ

Տարեկան գին կանխիկ զուգուշ 100 : Վեցամսեայ գին զուգուշ 52 1/2 : Եւամսեայ գին 26 3/4 :
Հինգ տարապրուռց գանդին մէկ օրինակ իրեն ձրի դիտի արուի :
Այս Լրագիրը ամեն շաբաթ օրերը կը հրատարակուի :

Պօշխոն գուրս գալած Լրագիրներուն փոխադրանք ծախքը անոնցին քրայ է :
Իր շահին համար շուր մը հրատարակեալ ուշացը դիտի քնարէ տոցին 40 փարայ :
Հրատարակող գրքոց ծանուցու մը ձրի է : Դուրսէն եկած նամակներուն փոխադրանք ծախքը դիտի քնարէ :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ն Ե Ր Ք Ի Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՊՕԼԻՍ 12 ՄԱՐՏ

Նորին թոյն թուովն ծանուցինք որ բարձրագոյն դուռը յատուկ հրովարտական մը հրաման ըրեր է յունաց ազգին որ՝ ազգային եկամուտը չի վաճառելու համար պէտք եղած միջոցները գործի դնեն :

Այսօր ալ նոյն հրովարտական թարգմանութիւնը կը դնենք հոս :

« Երթանապատիւ պատրիարք յունաց :

« Ստեպ ստեպ յատուկ հրովարտական թուով պատուիրեր եմք որ մէկ մին ալ ազգին եկամուտը ունայն բաներու համար չի վաճառելով՝ անկէ չափաւոր կերպով ծախք ընէք պատրիարքարանի, հիւանդանոցի, դպրոցներու և այլ ասոր նման ազգային տեղերու բարեկարգութեանը և թէ՛ ջանաք որ աւազանորդները դուրսերը բնաւ իրենց ժողովուրդին դրամը չընեն : Այս պատուէրները բնաւ մէկ ազգեցութիւն մը չընելով, նոյն գէշութիւնները միշտ կը լսուին որ վեհափառ Երբային կամայը գլխովին դէմ է : Վեհափառ արքայն կը ցաւի որ՝ ստակը որ ազգին բարութեանը համար արուած է ազգային սննդանոցին՝ ասոր անոր անօթի ձեռքն է ինկած և թէ եպիսկոպոսները ինքեթովին գանձապետ եղեր են այն ստակին :

« Եւ ինչ որ իրաւ կարեւոր բան մըն է որ ազգը ինքեթ գլուխ ժողովելով՝ այս գէշութիւններուն առջեւ ինչ միջոցներով կ'առնուի նե՛՛ն՝ այն միջոցները գործի դնէ, որովհետեւ եպիսկոպոսներուն ու քահանաներուն արտօքը միայն այն է որ իրենց խնայողութեամբ թէ բանիւն է եղեր և թէ գրով ժողովուրդին վարքը բարձր ուղղեն, անոնց հոգեւոր պարտաւորութիւնները ճանչցունեն, վերջապէս իրենց բարի գործերով անոնց բարի օրինակ ըլլան, չէ թէ ասանկ արձաթիւթութեամբ ու կերպ կերպ անվայել գործերով իրենց յարգը կորստեցունեն ժողովուրդին առջեւ :

« Հատ անգամ լսեր եմք ու ստուգեր եմք որ՝ ձերթօքները դուրսերը անանկ անկորաւորութիւններ և անանկ պակասութիւններ կը գործեն եղեր որ էն յետին ապէտ աշխարհական մը խիղճը չի ներեր որ գործէ : Այս ծամբով՝ ըսել է որ՝ անոնք ժողովուրդը լուսաւորելու, ժողովուրդը ուղիղ ծամբան առաջնորդելու չեն կոչուած, հասցա դաննը գլխովին խաւարը ձգելու ու մարդեցունելու հա-

մար : Այլ որովհետեւ միանկ քահանայական անուներ բան մը չկրնար ընել, այլ պէտք է որ իրեն պաշտօնին վերաբերեալ գործերն ալ գործէ, անոր համար, ալ ասկէ ետեւ անանկ եկեղեցականները բնաւ իրենց իշխանութիւնը ոչ ստակով պիտի դնեն և ոչ ստակով պիտի վաճառեն, որովհետեւ աւանկ ըլլայ նե՛՛ն՝ եկեղեցականը մոռնին կ'ըսեն որ՝ այս ինչ վիճակը ստանալու համար որչափ ծախք ընեմ՝ նե՛՛ն՝ նոյնչափ ալ անկէ վատրելու կ'աշխատիմ :

« Երթանապատիւ պատրիարք, վեհափառ Երբայն այդ իշխանութիւնը որ ձեզի տուեր է, կ'ուզէ որ հաստատ մնայ, նոյնպէս ալ մենք. և այդ իշխանութեամբ ջանացէք որ վեհափառ Երբային կամբը տեղը տանիք ձեր այն եպիսկոպոսներով և այն աշխարհական երեւելիներով որ ազգիդ օգուտը կ'ուզեն, որպէս զի յարգեալ պատուիդ ալ ժողովուրդին առջեւ մեծնայ :

Այս բարեկարգութիւնը գրի առնելէ՛ք ետեւ՝ բարձրագոյն դուռն ալ պիտի ներկայացունէք, որով ազգէն մեղի կրկին աղերսագիր տուողներն համոզենք :

« Ստակովն մէջ գանուող օսմանեան բանաւ կին հրամանատար Ռիֆագ փաշան մայրաքաղաքս եկաւ կառավարութեան հրամանաւ : Այս դորա պէտք իւր ղեկնորական բարեկարգութիւններովը Ստակովն մէջ ամէն տեղ ամէնուհն սիրելի եղաւ ժողովուրդը մեծին ու պոռնիկին : Երբ որ Ստակովն եկաւ այս դորապէտը՝ այն տեղի ժողովուրդը ակառաւ տես ըլլալով անոր ըրած հաւատարմութեամբ ծառայութիւններուն շատ պատուեցին ու մեծարեցին զանի և վերջապէս ստ հետեւեալ նամակը գրեցին անոր :

Իպրայիլ 10 փետրվար 1849

Երթանապատիւ Ռիֆագ փաշա և այլն և այլն :

Հատ կը ցուիմք լսելով որ մօտ օրերու պիտի մեկնէք եղեր ասկէ : Հաւատացէք որ ձեր ասկէ հեռանալը մեր արմին մէջ մէկ մեծ դատարի տեղ մը պիտի ձգէ : Սեր վայելած խաղաղութիւնը, հրամայած գոնդեքնուդ գովել վարմունքը և ձեր բարուց քաղաքութիւնը բնաւ միտքերնու չկարծի Եւրոպայի Պարտիքնիս է որ այս գեղալ մէկ ծառայանքը մեր սրտին երախտագիտութիւնը, և ձեր հոս անցած ցածրուն քաղաքը իշխանապետ պարտաւորած պիտի մնայ մեր սրտին վրայ : Ստակովն մէկը որ ձեր կենտրոն երկարութեանը ու բարօրութեանը համար մեր և բոլոր հասարակութեան բարեմաղթութիւնները ընդունէք :

Երթանապատիւ տեսնող

Անիտապատիւ և ամենահաղաւթ ծառայք :

« Ռիֆագ փաշան Ստակովն մեկնելէն մէկ երկու օր առաջ կարգաւ փառաւոր հանգէս մը ըրեր է նստած պանդոկը. ուր հրաւիրեալ են եղեր գրեթէ տեղւոյն բոլոր բնակիչները անխորի :

« Ստակովն Ստակովն փաշան որ երբեմն արքունի բժշկապետ էր՝ առեւտրական ատենի տե-

տու անուանեցաւ անցեալ շաբաթ օր ինչպէս որ կը գուշակուէր :

« Երթանապատիւ կառավարութեան նորընտիր դորա ծախք արժանապատիւ Սիտար պէյը առաջին առիթով Երթանապատի պիտի երթայ իւր նոր պաշտօնէն շնորհակալ ըլլալու համար Վ. Եւրոպայ փաշայն :

« Ղերմակ՝ ծովու մէջ Երջիպեղաքոսի կղզիներուն առջեւը ասպատակի նաւեր երեւնալը Ռուսոսէն կը գրեն. և այս նաւերուն մէկ բանին ալ Եւրոպայի ծովեղբները կը պարտաին : Նոտարակոյտ նորընտիր ծովապետ վաճառաւոր Սիւլէյման փաշան աս նաւերը ձեռք ձգելու կամ ան տեղէն հեռացունելու մէկ հնարը ժամանակ չանցունելով կը հոգայ :

« Երթանապատիւ մը ի վեր տեղւոյ ոստիկանութիւն ինքամուր էր որ մայրաքաղաքիս մէջ գողերու մեծ կախ ընկերութիւն մը կայ, ուստի մեծ աջալըծութեամբ այս բանին ետեւէ էր, այս օրերս՝ այս ընկերութեան գլխաւորներէն մէկ քանին ձեռք ձգեց, որոնց մէկին անուանէ Սամսո, և միւսինը Պէտոս. Սամսոն Պէթըր Եւրոպայի փաշան պախալէ եղեր և Պէտոսն ալ անոր քովը սպասաւոր : Այս մարդիկը բանան են և շատ չի բէք միւս ընկերները նին ալ կը գանուին :

« Խուլէ խաբուսին անցեալ կիրակի գաղղաղի պարտիզաններուն նստած մաղապան գող մտեր է ու 20.000 զուգուշի ստակ գողցեր է, տակաւին չենք գիտեր թէ գողը բռնուե՞ր է մի :

« Երկրագործութեան արքունի գաղղոց որ արգայ Պ. Գրիգոր Երթանապատի կառավարութեան ներքեւն է և ասոր ալ օգնական արգայ Պ. Գրիգոր Սթիվարտեանն է՝ ասկէ քանի մը շաբաթէն ետեւ սեայ քննութիւն պիտի տայ :

« Այս գաղղոց օր առաւ ամէն մասամբ յառաջանալու վրայ է. մէջի չէնքերը ընդարձակուեցաւ, անասուններուն թիւը շատցաւ առաջի վրայ և զանազան տեսակ ընդեղեններ փորձի դուրեցաւ, բանի մը հաղար ծառ զանազան տեղերէ բերուեցան, վերջապէս կը յուսացուի որ այս գաղղոց քիչ ժամանակի մէջ վրայի գանուող մարդոց հաւատարիմ ծառայութեամբ շատ առաջ պիտի երթայ, մանաւանդ որ վեհափառ Երբայն ալ մեծ սէր ունի այս տեղին վրայ. և շատ հաւանական է որ ետեւ սեայ քննութեան ալ ներկայ գանուի :

« Իարձրագոյն դուռը՝ հանգուցեալ գերապատիւ Ռիֆագ խանցի Պետրոս ամիրային Խաւա Նը շանը իւր բարեխիշտակ որդւոյն աղնիւ Յակոբ աղային շնորհեց՝ ասանկ մէկ փառաւոր պատուոյնը շանի մը դանի արժանաւոր դատելով. ուստի մենք ալ մեր կողմէն վայելուչ եղած բարեմաղթութիւնները կը պարտաւորեմք ընել յիշեալ արժանապատիւ անձին :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ

ՎՐԱՅ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հարաւանդութիւն 1 :

ՀԱՏՈՒԱԾ Գ.

ԳՐԱՄ

Ստանալ անհետութիւնը քանի որ զարգացաւ, թէպէտ փոխանակութիւնները դիւրացայց ու մարդկանց բարեկեցութիւնը աւելի շատ ու հաստատ ըրաւ. բայց առանց քրաֆի վաճառականութիւնը ինքնիրեն այս օգուտներուն մէկը չէր կրնար ընել : Երբ արեւ, մոռք անանկ երկիր մը երեւակայեցնէր որ մէջը ամենեւին դրամի գործածութիւն չըլլայ, ու տեսնէր այն երկրի մարդիկը փոխանակութիւնին ինչպէս կրնան ընել : Օրինակի համար, համա-

րենք թէ գրածախին մէկը՝ հացի, կօշիկի ու միւսի կարօտի, ու ասոնց ամէնուն տեղը տալու գիրքէ ուրիշ բան չունանայ. բայց թէ որ հացագործը՝ կօշիկագործը՝ ու մտավաճառը, երբեք ալ կամ անոնց մէկը՝ երկուքը՝ գիրքի կարօտութիւն չունենան ու չառնեն նե՛՛ն, ինչ կ'ընէ մեր գրքածախը. յայտնի է որ ոչ իր ուղածը կրնայ տալ և ոչ ուղածը ստանալ. կամ որ նոյնն է փոխանակութիւն չի կրնար ընել : Ուրիշ գիրք ուսած մըն ալ ենթադրենք, թէ որ այն գիրքի կարօտ չեղող մտավաճառին ու հացագործին՝ մէկին գլխանոց մը ու մէկին աթոռ մը պէտք ըլլայ, ինչ կ'ընէր մեր գրավաճառը : Նոյն գլխաւոր ու աթոռ չկողներուն պիտի երթար, իր գիրքերը անոնց գլխանոցին ու աթոռին հետ փոխանակէր, ետքը անոնք բերէր հացագործին ու մտավաճառին տար, ու իր ուղածները անոնց մէ առնէր, որ ըսել է անհնարին գրեթէ անհնարութիւնը ու ժամանակի կորուստ քաշէր :

Բայց դիցուք թէ իրենց պիտոյքը հոգալու համար մարդիկ այս աշխատութիւնները քաշելու յանձն առնէին. բայց թէ որ վերի օրինակին մէջ գլխանոց ու աթոռ չկողներն ալ գիրքի չի կարօտէին, ու մէկը՝ հանդերձի մը ու մէկը՝ ալ նուագործանի մը կարօտէր նե՛՛ն, ինչ կ'ընէր այն ժամանակը մեր գրեթէ գրավաճառը. — ինչ պիտի ընէր, կը յուսահատէր կը կենար : Այս ենթադրած դժուարութիւններուն պէս, ուրիշ շատ տեսակներ կան որ դրամի գործածութիւն չեղած երկիրներուն մէջ պիտի պատահէր փոխանակութեան ժամանակ : Բայց որ օրէն մարդիկ դրամի գործածութիւնը իրենց մէջ մտոցուցին, այս ներդրութիւնները՝ դժուարութիւնները՝ ու ժամանակի կորուստներուն ամէնն ալ վերջացան. վասն զի, անոյ ամէն մարդ իր ուղածը, ուղած չափովը կրնայ առնել. վասն զի, ամէն մարդ իր ուղածը քրաֆի կ'օգտագործէր, քանզի գիտէ, որ ինք ալ անոյ իր ամէն ուղածը կրնայ

ստանալ : Ուրեմն դրամին ըրած ծառայութեանը նայելով՝ անիկայ կրնանք այսպէս սահմանել : « Իրամը ընդհանրական վաճառք մըն է, որ փոխանակութիւնները գիրքին ու հնարաւոր կ'ընէ » : Կամ, քրաֆի փոխանակութեան ընդհանուր միջոց մըն է : Իրամին այսչափ կարողութեանը վրայ մոմըտացողը՝ բնականաբար կ'ուզէ իմանալ թէ ինչո՞ւ համար մարդիկ իրենց փոխանակութեանը միջոց մը ըլլալու համար, դրամը ընտրեցին. ու ոսկին, արծաթին, պղնձին տեղը՝ ուրիշ նիւթեր չեն գործածեր, մանաւանդ որ, այն ոսկիի, արծաթի ու պղնձի կտորները՝ մէկը չի կրնար անփշապէս գործածել, այլ անոնցմէ օգուտ մը գտնալու համար, ամէն մարդ պարտաւոր է նոյն անոնք ուրիշ բանի մը հետ փոխանակելով ձեռքէ հանելու : Հասարակաբար կը կարծուի, որ դրամներուն ամէն տեղ ու ամէն մարդու քով յարգ գտնալը՝ վրանին կա-

ԱՐՏԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՂԱՒԱ: Այս երկիրը ինչպէս որ նախընթաց թուովն ալ ըսինք, միշտ հանդարտութեան մէջ է: Թէ որ օրէնսդիր ժողովն անգամներուն ընտրութիւնն ալ խաղաղութեամբ ըլլայ նէ, ալ անկէ անդին Վաղղիային խաղաղութիւնը՝ կը յուսամք որ երկար ատեն կը տեւէ: Այս ասոր համար տեւութեան խորհրդարանը յատուկ մէկ ժողովը մը հաստատեց, որոնց անդամներն են Կառնիէ — Բաթէն, Բանիէր, Պարթէլէմի, Սէնթ — Հիւէր, Տիւբէր և այլն: Ասեալ այս հետեւեալ յայտարարութիւնը հրատարակեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱՅԵՄՈՒԹԵԱՆ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

«Այս յայտարարութեանը ներքեւը ստորագրուող երեսփոխանները՝ սահմանադիր ժողովն մէջը գտնուելով, հաշտարար չափաւորութեան քաղաքականութիւնը անսխալօք եղանակաւ գործածելուն, և այն քաղաքականութեամբը զանազան համայնք միութիւններ ալ հաստատեցին, որոնց գլուխաւորներն են կարգադիր ժողովը և տեւութեան խորհրդարանը: Հիմայ ալ նոյն երեսփոխանները օրէնսդիր ժողովն անդամները ընտրութեանը համար ըլլաւէնք ընդհանուր քուէարկութեանն առաջ ալ մէկ մարդ ինչ խորհրդով՝ ինչ ոգով այս ընտրութեանը համար քուէ պիտի տայ նէ՝ անիկայ ժողովըին պիտի իմացունէ օր առաջ այս յայտարարութեամբ ըլլաւ:

«Վաղղիան իրեն ինչ ըլլալուն մեծ փորձը՝ իսկ փորձը ցուցունելու վրայ է: Վանի մը շաբաթէն պիտի հրաւիրուի Վաղղիան իւր կարգադրութիւնը ներքէ գլխաւորելու օրէնսդիր ժողովն անգամայ ընտրութեամբը:

«Վաղղիայի որ արդէն ընդհանուր քուէարկութեան երեւելի պաշտօն մը արժանանորակեալ կատարեցին, այսինքն ինչպէս որ կը վայելէ իրենց իշխանական իրաւանցը, այս անգամ ալ անստորադրաւ Վաղղիային բարեկարգութիւնը՝ խաղաղութիւնը և ընկերական վիճակին բարեւոլութիւնը յիշելով պիտի տան իրենց քուէն, այսինքն անանկ մարդիկ պիտի ընտրեն օրէնսդիր ժողովն անգամ որ Վաղղիայի չափաւոր հասարակապետութեանը հաւաքալ մարդիկ չըլլան, այլ բարեկամ:

«1848 ի Հասարակապետութիւնը բարեկարգող կառավարութիւնը ոչ թէ յեղափոխութիւնը մշտնջենաւորելու համար, այլ անհետ ընելու համար հաստատուեցաւ: Հասարակապետութիւնը որ անակնկալ ժամանակ մը հաստատուեցաւ, և ալ անկէ ետեւ չի գործուել խառնուրդներուն ու սղակապութիւններուն մէջէն դուրս ելաւ, կողմնակցութիւն չի պիտի ծանշայ, այլ Վաղղիային յառաջդիրմութիւնը և անոր խիստ կարեւոր եղած միջոցները պիտի ծանշայ: Հասարակապետութիւնը անոր համար հաստատուեցաւ որ օրինաւոր և արդար կառավարութիւնը այն է, և որ և իցէ կառավարութեան կերպ՝ անոր հետ բաղդա տեւով, տկար ու անորոք են: Կ'ուզէ որ ամէն մարդ այս կառավարութիւնը ընդունէ, կ'ուզէ որ ամէն մարդ անոր ուժ տայ, կ'ուզէ որ ամէն մարդ ինքը զինքը անոր ուժ տայ, չէ նէ անոր պատիւը կը սղդտիկնայ, և այս պաղղիայեաց մեծ նախատինք մը կ'ըլլայ: Ա' երջապէս կ'ուզէ որ բոլոր մարդկային իրաւանց ինչ ըլլալը ամէն մարդ լուսաւոր մտօք լաւ հասկընայ, որովհետեւ ինքը ասով պիտի զօրանայ,

կ'ուզէ որ օր աւուր հասարակութեան արդուտին միջոցները գտնայ, անոնց թշուառութիւնը թեւթեւանէ, Վաղղիան հարստացունէ:

«Ինտրողները իրենց փոփոխամտութեամբը՝ տկարութեամբը և կամ խռովակէր մարդոց թեւթեւութեամբը գլխէ ելլալով՝ Վաղղիային բարեկարգութիւնը չաւերելու համար՝ հասարակապետութիւնը իրարու ետեւէ քանի մը յաղթութիւններ ըրաւ անիշխանութեան վրայ, և օր աւուր խաղաղապէս որ մը տարածելու համար Վաղղիայի մէջ շատ ազդու միջոցներ գործածեց և բոլորն ալ յաջողեցան: Հարուստները սկսած գործերնիս միշտ աղէկցունելով, անոր թերութիւնները բանի տեղ չի դնելով՝ ջանանք հաստատ պահելու, որովհետեւ որչափ որ նոր նոր խռովութիւններ հանենք մէկ մէկու հակառակ, այսինքն ասոր խռովութիւն մը հանենք հասարակապետութիւն հաստատելու, վաղը ուրիշ խռովութիւն մը հանենք միապետութիւն և կամ մէկ այլ կերպ կառավարութիւն հաստատելու, գիտանք որ Վաղղիան կործանման վտանգը հասուցած կ'ըլլայ: Աւերմի վախճան տանք յեղափոխութիւններուն: Վրէական յանցանք պիտի համարուի ալ ասիկ ետեւ ալ մեան կառավարութիւնը գէտ եղած գաղտնի միաբանութիւնները, յեղափոխութիւն հանելու փորձած փորձերը: Աւ ու որ որ այս կերպ քրէական յանցանք տէր գտնուի նէ՝ անանկները վերջին յեղափոխութեան օրը փաղցները արիւնով ներկող եղբնապործ մարդոց կարգը պիտի համարուի և ինքրիկները բնաւ մէկ սրտաճառանքով մը չի պիտի կրնայ արդարացունել:

«Ինչ հանուր քուէարկութեան համար ինչ կա նոն, ինչ պայման և ինչ օրէնք տրուեցաւ սահմանադիր ժողովն ձեռքը նէ՝ անոնց ամէն ալ պահուեցան հասարակապետութեան նախագահին ընտրութեան օրերը: Կ'ուզենք որ հիմայ ալ նոյնպէս պահուին: Այսպէս մեր 10 ին եղած երեւելի ընտրութեամբը Վաղղիան ուղեց Նաբոլէոն Պոնաբարէի փառաւոր անունովը հասարակապետութիւնը վերահաստատել: Բարի քաղաքացիները իրենց ներքին տհաճութիւնը թող ջնջեն և միաւորին ամէնուն հետ՝ որ Վաղղիայի բարեկարգութիւնը՝ խաղաղութիւնը ու երջանկութիւնը ապահով ըլլայ:

«Ա' երջապէս միայն այս մտօքն է, միայն այս ոգովն է որ այս յայտարարութիւնը կը գրենք մեր սիրելի քաղաքակիցներուն: Թող ժողովուրդը իւր իմաստութեամբը մէկգի ձգէ կործանուած կառավարութեան վրայ ունեցած ամուլ յոյսերը: այն կառավարութիւնը ետ դառնալու համար նորէն շատ արիւն թափել պէտք է, դարձեալ թող ժողովուրդը մէկգի ձգէ ամէնայն ինչ հասարակաց ընելու անխելք և ազգախորժան ճամբան: Այն քուէն մեզի ընդունելուն է՝ որ հաստատուած կառավարութիւնը ընդունելուն՝ անոր աղէկութիւնը ուղեցու մտօք՝ մէկ խօսք, խոհեմութեամբ և խաղաղապէս ոգով տրուած է:

«Երջանիկ պիտի համարենք մենք մեզ, թէ որ այս հայրենասիրական խօսքերովն համալուին ընտրողները: որպէս զի Վաղղիան անցուցած սոսկալի օրերը մէկ մէկ ալ չի տեսնայ, և մենք ալ հայրենիքներուս արդիւնաւոր և արժանաւոր ծառայողութիւն մը ըրած ըլլանք, ինչպէս որ միշտ սրտաւոր միակ բաղձանքն է:

Փարիզ 16 փետրուար 1849

— Ա' էննայի Խոֆայի Եկած Վաղղիայի օրագրի ընդ կը սրտամեն որ ընտրութեան օրինաց վերջին

յոգուածներն ալ որոշուեր են, և ամէն մէկ գաւառէն քանի երեսփոխան յարմար տեսեր է խորհրդարանը նէ, այն ալ ծանուցուեր է հասարակութեան: Այս ինչ գաւառին երեսփոխանները քիչ է, այն ինչ գաւառինը շատ է ըսելով՝ կասկած կար որ մեծ վեճեր ըլլար, բայց այս վեճերուն հիչ մէկն ալ չէ եղեր: Այսինքն Նիշայի և անոր գաղութականները քիչ մը տրտնջացեր են իրենց կողմէն ընտրութեան երեսփոխաններուն թուոյն դէմ:

Ինտրողական օրէնքն ալ մարտի 8 ին կամ 9 ին պիտի որոշուի, ուրեմն ասոր հրատարակուելուն ալ 9 օր պէտք է, և մարտի 17 կամ 18 էն առաջ ընտրողական ցուցակներուն շինութիւնը չի կրնար սկսուիլ: Ըսել է որ թէ ցուցակներուն հրատարակուելուն և թէ անգամայ ընտրութեան քառասուն օր պէտք է և օրէնսդիր ժողովն ալ մայիսի 20 ին կամ 25 ին հաղիւ կը հաստատուի:

ԱՆԳԱՒԱ: Իսկ մը ատեն կայ որ հասարակութիւնը կ'ուզէ որ՝ կառավարութիւնը քիչցունէ զինուորական ծախքը, ասոր վրայով հասարակապետ խորհրդարանին մէջ ալ շատ երկար վեճեր եղան: Այս անգամ ալ Պ. Վոսպէն խօսեցաւ, բայց 78 քուէի դէմ 275 քուէով մերժուեցաւ անոր խօսածը: Պ. Վոսպէն որ խիստ իրաւամբ կը խօսէր, և իւր բոլոր իրաւունքը քաջ տրամաբանութեամբ լաւ կը բացատրէր՝ կ'առաջարկէր ժողովին որ՝ Նիշայի կառավարութիւնը 1835 ին ինչ զինուորական ծախք ունէր նէ հիմայ ալ նոյն ծախքը ունենայ, որովհետեւ այն ժամանակին մինչեւ այս օրս 10 միլիոն լիւրս սթէռլին աւելցուցեր է զինուորական տարեկան ծախքը: Այս ծախքը տասն և չորս տարիէ ի վեր՝ որ առ ի թով այսչափ և որ առ ի թով այնչափ աւելնալը կարգաւ յիշեց իւր ատենաբանութեանը մէջ: 1835 ին Ուստի պատերազմ բաւարար վախով ծովային զինուորներուն թիւը 5000 հոգի աւելցաւ, վախը անցաւ, բայց մարդիկը մը նային: 1838 ին Վանատույի պայտամբութեան վախովը 8000 հոգի ելլելու բանակին վրայ, ապաւորութիւնը զսպուեցաւ, բայց զօրաց թիւը չի պակսեց: նոյնպէս Կոլ գաւառին խռովութեանը համար 5000 հոգի աւելցաւ բանակը՝ ան ալ մը նայ: Եւրոպայի զօրք խաւրելու համար 5000 հոգի, Այսպէս նահանգին հետ եղած վեճին համար 5000 հոգի աւելցաւ, ասանք ալ մնացին, վերջապէս Սթէրլին վեճին համար 2 միլիոն լիւրս սթէրլին, Սթէրլին թագուհւոյն ամուսնուելը վրայով եղած կռիւն պատճառաւ դարձեալ զինուորական ծախքը աւելցաւ, բայց այս վեճերուն, այս կռիւններուն, այս պատերազմներուն ամէն ալ լրմնացաւ, զինուորական ծախքը նոյնը մնաց:

Պ. Վոսպէնի գիւրին պատասխան սա կրնար տրուել որ Նիշայի թէ ներքին և թէ արտաքին վիճակը տակաւին կատարեալ ապահով չըլլալով, կառավարութիւնը չի կրնար իւր զինուորական ծախքը քիչցունել: Բայց ասանկ պատասխան մը տրուելու տեղը չէ մը գիտեր ինչու բանը անուշ տեղը կապեցին, ըսելով որ կառավարութիւնը միայն ունի 1 միլիոն 500,000 լիւրս սթէռլին զինուորական ծախքը ինչեցունելու, այսինքն ասիկ 14 տարի առաջ ունեցած ծախքին հաւասարելու:

— Վայել օրագիրը կ'ըսէ որ Պիւնտէն Ռուսիայի ասպետը Լոնդոն դարձեր է լիակատար իշխանութիւն առնելով թէ Պերլինի խորհրդարանէն և թէ Վանաքթորգի կեդրոնական կառավարութեանէն որ Նիշայի կառավարութեան միջնորդութեամբը

ՀԱՏՈՒԱԾ Դ.

ԽՆԱՅՈՒԹԻՒՆ

Իրամը որչափ հարկաւոր բան էր տեսանք: Ինչ որ կ'ուտենք կը հազնինք ու կը վայելենք, բոլորն ալ դրամի միջոցով ձեռք կ'ուգան, անոր համար քիչմ'ալ այն ցանկալի միջոցը ձեռք բերելու և եղածն ալ շտայցնելու եղանակին վրայ խօսելը կարճեմ անտեղի չէ:

Ինչ հանրապէս մեր ծախքերը (մաւսարիք) մեր փառապէսն կ'եղին: Թէ որ մեր փառապէսն աւելին ծախքը նենք՝ պարտական կ'ըլլանք: Թէ որ փառապէսն լրման ծախքը՝ միշտ մէկ ատարիւն մէջ կը մնանք, ու կառավարութիւնն (որ է դրամը) ալ միշտ մէկ չափով մնալուն վայելքնիս ալ սահմանաւոր կ'ըլլայ: Եւ ջնջ ճամբով ծախք ընելու եղանակին վրայ ըսելը մը չունիմ, որովհետեւ այն ճամբուն

աւարութեան գրոշմը (սիքքէ) ըլլալն է. բայց այս ստոյգ չէ: Ա' ասն զի, թէ որ Վեճիտէն հինգ փարանցի ծանրութեամբ պղինձի մը վրայ կառավարութեան գրոշմը ըլլար ու քեզի տային, նոյն ծանրութեամբ արծաթի մը փոխարէն տուած ասպրանքիչափ բան չէիր իրար անոր տեղը, և թէ որ տալու քեզի հարկադրէին, ան ալ բաւարարութեամբ եղած կ'ըլլար, քուէ կամօքը չէր ըլլար, որ դրամին բնութեանը բոլորն զէմ է:

Կառավարութեան իշխանութիւնը թէպէտ կրնայ այն պղինձի կտորին ուղտած անունը տալ, բայց անոր յարգը չի կրնար լի անունով մը աւելցունել: Թէ որ հասարակութեան կարծածին պէս ըլլար, կառավարութիւնը հինգ զուռուշնոց արծաթին տեղը հինգ փարանցի պղինձ կը իտէր: Ուստի որ զի գառնանք, հինգ զուռուշն արծաթ բան մը առնելու համար թէ որ արծաթ հինգնոց մը չկուտնք, հարկաւ 40 հատ հինգ փարանցի պղինձ

տալու ենք: Աստի ոսկիէ, արծաթէ ու պղինձէ դրամներուն ամէն տեղ անցնելուն պատճառը վրայի գրոշմը չէ, այլ ըստ ինքեան յարգ մը ունենալնն է. և ասոր փորձն ալ սո է որ, երբոր քանի մը հինգնոց մէկտեղ հալեցնես ու ձուլ (քիւլելէ) մը բնելու ըլլաս ու ոսկերիքին տանիս, քիչ մը պտիւնով գինեքնին քեզի կը վճարէ: Այսինքն, պղինձը ինչ ձեւով ըլլայ, յարգ մը ունի:

Դրամի համար ոսկին արծաթը ու պղինձը չի գործածուած, մարդիկ ու իշխանութիւն գործածելին. և մինչեւ հիմայ ալ վայրենի աղբաց մէջ կը գործածուին, ինչպէս են տեսնի տեսնի ինչիներ, ծխախոտ (թիւթիւն) աղ, կտաւ, կով ձի, ցորեն, մորթ (տէրի) բեւեռ, երկաթ, և այլն: Բայց անոնց մէկը ոսկին արծաթին ու պղինձին յարմարութիւնը չունի: Ա' անք ոչ կը կտորին, ոչ կը մաշին և ոչ կը փրտան: Իրենց յարգին նայելով՝

քիչ տեղ կը բռնեն. որչափ մանր ու զէտ կրնան բաժանել, ու պղինձէ դրամը՝ մանաւանդ մանր մուկն ծախքելու համար խիստ աղէկ կ'ուգայ: Ա' հա այս պատճառներուն համար է, որ ոսկին արծաթը ու պղինձը ամէն աղբիւրներէ գրամ ընէր է:

Ս' աստեղներս տեսակ մը դրամ ալ ելաւ թղթէ, որ դրամալիւր (քայի մէ) կ'ըսենք: Ինչպէս թէպէտ իւր իրաւանք դրամ կ'առնեն կուտան, բայց իւրք դրամ չէ, այլ տեղը դրամ տալու խոտման գիր մը կամ մուրհակ (թէմսիկ) մը: Թէ որ աղէկ մամը տալու ըլլանք, մինչեւ որ այն թղթէրուն փոխարէն դրամ առնելու վտուտ հաւթիւնը չունենանք, մէկերնիս ալ չենք կրնար առնել ու տալ: Ա' այս վրա տահալութիւնը ունենալուն, ամէն ալ դրամի տեղ կ'առնեն կուտանք, մանաւանդ որ դրամէն դիւրատար է:

հաշտութիւնն հաստատեալ Տանիմարայի և Բրուսիայի տէրութեան մէջ : Պատերազմի կեդրոնական կառավարութիւնը անոր համար իւր կողմէն ալ լիակատար իշխանութիւն կուտայ որ Շլէսվիկի և Զոլդերնի տուրքայութիւնները պաշտպանելու համար ղեկըրով օգնութիւն խոստացած էր Բրուսիային : Այնչաւ օրագիրը հաստատ կը յուսայ որ այս լիակատար իշխանութեամբ Օստրա խրկուած դէսպանը՝ Բրուսիայի նաւատորմիկն տկարութիւնը յիշելով և Վերմանիայի քաղաքական ապահովութիւնը ու խաղաղութիւնը ցանկալով, հոգեով չափ աշխատի իւր բնական ճարտարութեամբ իրեն յանձնուած պաշտօնը գլուխ տանելու :

— Լնդէնի տէրութեան մէջ անուան գիտնական Գիլիսի տէրութեան ղեկավարն անցնելու ատեն նրա տէրութեան մարդիկը այն նաւը կողոպտէր և մէջի մարդոց մէկ քանին սպաններ և մէկ քանին ալ վերաւորէր էին : Եւրոպայի հաստատութիւնը լնդէնի Լնդէնի մէջ, բայց ասիկայ քիչ մը գիտնական համար՝ Լնդէնի պարտաւորեցաւ իւր խնդիրը պատերազմով ընդունել տալու, և արդէն պատերազմական պատրաստութեան հրամանն ալ խաւրեց իւր նաւատորմիկն : Եւրոպայի միջոցով Գիլիսի կայսրը 10,000 լիւրա սխեմլին հասուցեր է Լնդէնի իբրեւ հաստատութիւն կողոպտուած նաւուն :

— Մարթայէն կը գրեն որ Մարթայի ամրոցը որ տակաւին հնդկիներուն ձեռքն էր, անձնատուր եղեր է անգլիացոց յուսկարի 22 ին, բայց շատ դժուարութեամբ : Լնդէնի շարունակ 18 օր թնդանողով ձեռքէն էն այս ամրոցը որուն մէջ կայ եղեր 4000 հոգիի չափ :

Լնդէնի կը գրեն որ՝ սերբերուն պաշտպանած անտառի զիրքը վերջապէս անգլիացոց ձեռքն անցեր է, բայց 3000 հոգիի չափ զինուոր կործնուցեր էն իրենցմէ սրանց մէջ շատ ալ զօրապետ կայ եղեր :

ԳԵՐՄԱՆԻԱ : Փետրուարի 26 ին Բրուսիայի թագաւորը անձամբ օրէնսդիր խորհրդարանը բացաւ և այս առիթով ծառայեցաւ խոսեցաւ որուն միտքը այս է որ ինքը սահմանադրութիւն չնորհեց որ երկրին մէջ հաւասարութիւն ըլլայ : Հաւասարութիւնը նորէն հաստատուեցաւ, փառաւորաւ նախագահը, ձեռքով ճարտարութիւնը նորէն կենդանացաւ : Երկու խորհրդարանը պիտի խորհրդակցին սահմանադրութեան մէջ փոփոխութիւն պատճառող իրաց վրայ : Պաշտօնական վիճակին վերաբերեալ թուով խորհրդարաններուն պիտի արուին : Երկուստեանց ինչ պայմանի մէջ պիտի ըլլան նե՛ այն պայմաններուն նոր կարգադրութեանը որ առաջ գործադրուելուն համար հրաման եղեր է խորհրդարաններուն : Երկուստեանց ղեկավարութեանը վրայով և զանազան գործադիր օրինաց վրայով պատուէր տրուած է դարձեալ նոյն խորհրդարաններուն որ խորհին : Եւրոպ 1849 ին տարեկան ծախքը պիտի կարգի դնեն և անցեալ տարուան փոխ առնուած 15 միլիոն ֆրանկը ինչպէս գործածուած ըլլալուն հաշիւը անոնց պիտի արուին : Եւրոպի գանձը թէ որ փոխ չառնէր թուով ստակ նե՛ ձեռքով ճարտարութիւնը շատ գէշ կ'ըլլար : Վերմանիային եկաւ խօսքը նե՛ ստակ խօսեցաւ թագաւորը « գերմանական երկիրները մէկ մէկու հետ արշափ առաւել մտերմութեամբ կապուին նե՛ այնչափ կ'ուրախանամ : Կառավարութիւնը անկեղծութեամբ այս բանին շատ ջանք ըրաւ և ինչ որ Բրուսիան մինչեւ հիմա զոհ

ըրաւ նե՛ անոնց վրայ ալ չիտիտի զընայ : Վերմանայի իշխաններուն միտքը հասկնալու համար ինչ ծամբայ կայ նե՛ առջեւինդ բայց է : Դուք ինքնին գիտէք թէ՛ մեր ցանկացած նպատակին շուտով հասնելու համար ինչ պէտք է որ ընենք ձեր կողմէն » : Թագաւորը կը յուսայ որ Տանիմարայի հետ ունեցած վեճը քիչ աւելոր մէջ կը լըմնայ, և այն :

Երկրի կոմսը արքունի հրամանաւ արտաքին գործոց պաշտօնէն անուանեցաւ և Պ. Ռայտ եկամբ տից պաշտօնէն :

ԱՆՍՏՐԻԱ : Վէնայէն եկած օրագիրներուն ամսագիրը մինչեւ մարտի 6 կը հասնի : Եւրոպ քաղաքներուն մէջ Հունիարիայի վրայ դաւադրութեան երեք նոր յաղթութիւնը կը կարգաւորուի, թիւ 25, 26, 27 : Գրանտիլանիայի հիւսիսային կողմէն վրայ կարգադրուող Ռուսիան անուն կայսերաւ կան զօրաց հրամանատարը յաղթութիւն մը ըրաւ փետրուարի 18 ին 1 եւ 2 լեգէոնին հետ պատերազմած ժամանակը : Պայտրոսօֆի մէջ յարձակեցաւ այս լեգէոնին վրայ և մինչեւ Սարգարոս հարածեց զանոնք : Սիւս երկու յաղթութիւնն ալ Վէնայի կրէց իշխանը ըրեր է Եւրոպի մօտերը Գայս գետին ալ կողմը ու ժեյնին հաւաքող բաղմանիւ մահաւորներուն գէմ :

— Նախարարաց խորհրդարանը անանկ որոշեր է որ Պէրրայէն իբրեւ ուղեւոր առնուած 200,000 սքուլը Պայլին շնորհուի. որպէս իւր երկիրին իրաւութեանը պատճառաւ կրած նեղութեանը նը պատ մը ըլլայ :

— Վէնայի քաղաքապետ Պ. Վէլտէն՝ նոր յաւատարմութեամբ մը յիշեցուց ժողովրդոց ապստամբութեան փորձ փորձող մարդոց ղեկավարական օրինօք մահու դատապարտուելուն վճիռը, և երկու հոգի ալ հրաջանի բռնել տուեր է զէնքերնին կառավարութեան ծածկելուն համար :

Պայտրաքաղաքին օրագիրներուն ամէն ալ մեծ արհաժարութիւն կը ցուցնեն ուստի զօրաց Գրանտիլանիայ մահաւորն համար : Եւրոպ բանը՝ կ'ըսեն, Եւրոպի պատմութեան մէջ մէկ փոփոխութիւն մը պիտի համարուի, նաեւ հիմ մեր ներքին խաղաղութիւնը պիտի աւրէ, հիմ ալ օտար տէրութեանց հետ ունեցած միաբանութիւններն : Այնչաւ Գրանտիլանիա աղատեցաւ կ'ըսեն օրագիրները, բայց ինչպէ՛, ազգային պատիւնիս կորսնցունելով, ուստի տանկ պարագայներուն մէջ գէտ ի Եւրոպիա քաղաքը աղատութիւն տալով, ուրիշ երեւելի ազգայն հետ ներգաղթիւթիւննիս աւերելով :

Կառավարութեան լոյս անուն լրագիրն ալ ասոր հակառակ կ'ըսէ որ՝ ուստի զօրաց Գրանտիլանիա մահաւոր քաղաքականութիւններուն բնաւ փնտ մը չի կրնար բերել. ինտր եկաւ նե՛, անանկ ալ աւանք ետ պիտի դառնան, մինակ իրենց երախտիքը պիտի թողուն բարբարոս մահաւորներուն երեսնէն ընկճող ժողովրդոց կայն : Եւրոպ օրագիրը կ'ըսէ որ՝ այս շաբթու մաղ մնաց մայրաքաղաքիս ղեկավարները ոտք կ'ըլլային փետրուարի 20 ին մահու դատապարտուող ղեկավարին համար, բայց բարեբաղդութեամբ շուտով առջեւ առնուեցաւ այս ապստամբութեանը :

ԻՏԱԼԻԱ : Գորինօ, նախարարներուն մէջի եղած վեճը վերջացեր է, Պ. Ղիօպերթին նախարարաց ատենը չէ կանչուեր : Բոլլի զօրապետը ա

նոր տեղը արտաքին գործոց պաշտօնէն անուաներ է : Դիօմո զօրապետն ալ որ պատերազմի և ծովապաշտօնէն էր, խորհրդարանին նախագահ կարգեցաւ :

Բոլլի զօրապետը այն Բոլլի զօրապետին տղան է որ Պոնաբարդ Իտալիայի մէջ պատերազմ ըրած ժամանակը Ինքնութեի բանակին ընդհանուր հըրամանատար էր : Հիմալուան նախարարն ալ կայսեր քով զօրապետ ըլլալով 1809 ին պատերազմին գանուեցաւ և մէկ սրունկն ալ կորսնցուց : Իօմ պարտիայի վերջին պատերազմին ալ կարողութիւն վէնայի Վէնայի խաւրեց : Կը տեսնենք որ ապա անուն օրագիրը շատ կը գովէ Բոլլի զօրապետը և շատ ալ ուրախ է անոր պաշտօնի անցնելուն վրայ : Եւրոպ օրագիրը սահմանադրական չափաւոր կուսակցութեան բերանն է :

Եւրոպի խորհրդարանը բոլոր խորհրդականներուն ստորագրութեամբ յայտարարութիւն մը հըրատարակեց, որով կ'իմացունէ հասարակութեանը թէ՛ ինչ որ գրով խոստացեր է նե՛ պիտի կատարէ, համախոհ մասնաւոր ժողովներուն անկախութիւնը պիտի ընդունէ և սահմանադրական բոլոր իրաւունքները՝ թագաւորին է եղեր՝ ժողովուրդին է եղեր, պիտի պաշտպանէ :

Ղիօպերթին իբրեւ թշնամի Իտալիայի աղատութեան քրէական յանցանաց տէր համարուելով դատաստանի կանչուի :

Ինքնութեի բանակին ընդհանուր հրամանաւոր Պ. Բրանսօլլի և Մարմորա զօրապետը իրենց հրաժարական տուին Ղիօպերթին ըրած առեւտրականութեանը համար, և պատերազմի պաշտօնէն ալ իսկյն ձգեց Գորինօն և գնաց Լէքսանտրիս :

Որ աւելոր Իօմպարտիայի մէջ կարողութիւն զօրքը կը շանայ :

— Թօսթանայի մեծ դուքսը՝ օտար տէրութեանց դեսպաններուն որ իւր քովը գային Սանթ Սթէֆանօ, գրով բողոքեց անոնց իւր իրաւանցը պահպանութեանը համար :

Մեծ դուքսը հիմա պապին հետ մէկ տեղ կ'յեթ է :

Թօսթանայի մէջ առայժմ քաղաքական պատերազմ մը վերջացեր է : Իօմի զօրապետը իւր զօրացը երեսնէն ինչաւուն համար պարտաւորեց Ինքնութեի փախիլ :

Պ. Կերաձի այս տէրութեանը բոլոր գաւառները կրկին խաղաղութիւն հաստատուէն ետեւ Դիօրեձա դարձեր է :

ՀՈՌՄ : Եւրոպ մայրաքաղաքին մէջ բնաւ մէկ նոր բան մը չիկայ : Պ. Սաձանիին սահմանադիր Իտալիային պատգամաւոր ընտրուեցաւ 8982 քուէով :

ՆԱԲՕԼԻ : Եւրոպ տէրութեանը Սիկիլիայի հետ ունեցած վեճը այսպէս պիտի վերջանայ կ'ըսէ Սալթի օրագիրը : 1812 ի Սահմանադրութիւնը չափաւորուի, կամ արքունի գերդատանէն կամ սիկիլիայի մը փախաբայ ըլլայ, բերդերը ու ամրոցները՝ Նաբոլի զօրք ըլլայ, իսկ բանակը խառն : Սիկիլիայի կառավարութիւնը թագաւորին ընտրած պաշտօնէններով ըլլայ, նաբոլիցիացոց ու սիկիլիացոց միօրինակ ներողութիւն ու շնորհ : Սիկիլիացիները պատերազմի ծախուց համար 1,500,000 սկուա վճարեն :

հետեւողներն ալ չի հետեւողներն ալ անոր գէշութիւնը կը ծանշան, ու իրենց վատկածէն աւելին ծախք ընելով՝ քաղաք միջոցներն թէ որ ղեկներ չի զգուշացնէր նե՛ իմ տալիք խրատներս ալ անօգուտ է :

Գանք երկրորդ եղանակին : Որով հետեւ աշխարհի մէջ, հիւսանդութիւններ, արեւմտեան, զբաղաւորութիւններ, խաբէութիւններ, փնտներ, կուրուստներ և այլն, կան. և ատենց ամէն մէկն ալ՝ մեծամեծ հարստութիւններ ունեցանելու բաւական են, ուստի մարդս աշխարհի մէջ չըսեմ օր օրի հաւրտանալու ու մեծնալու համար, այլ միայն իր գանուած վիճակէն աւելի գէշին չիջնալու համար, հարկաւ պէտք է որ իր վատկածէն մաս մը՝ վերջիջեալ ձախողութիւններուն համար պահէ : Եւրոպ զգուշութիւնը չընդունելուն օրինակները պէտք է որ միշտ մտքերնու չի հանենք :

Ինչպէս թիւնը ոչ միայն մեր նիւթական վիճակը կ'աղէկընէ, այլ մեր

խնայական վիճակին վրայ ալ մեծ ազդեցութիւն մը ունի. փոս զի ամէն կերպ քաղաքականութիւն ու գիտութիւնն ալ, ինչպէս թեան պատուէն լով՝ այսինքն գրամով ձեռք կը բերւին :

Ինչպէս թիւն բաւը՝ ամէնուն մըտքին մէջ միեւնոյն նշանակութիւնը չառնէ : Համարը կը կարծեն որ ինչպէս թիւնը՝ պէտք է զանազան քիչ ծախք ընեն է : Եւրոպ ձանթութիւնով՝ հիւսանդ եղած ժամանակին վարպետ բժիշկ մը բերելուն ու աղէկ մը բըժըրիկութեան անգլիան, անձունի մարդոց, ձեռք ինչպէս տարին 12 ամիս արտաւոր կը մնան, բանէ գործէ ետ կը մնան, շատ ատեն կ'անքերնին ալ վրայ կուտան, ու ասիկայ ինչպէս թիւն կը սեպեն : Իմ հասկըցած ձախողութիւնը՝ իր ծախքերը յարմար ձախողութիւն կանոնաւորել, ու միշտ ուստաւոր գրամին յարգը՝ ձեռք ու բերված վայելքներուն հետ խոհաւոր կանոնութեամբ բաղաւորել ու համե

մատեն է : Ինչպէս թիւնը կ'ըսու թեան ու չաղութեան միջին ատիւ ձանն է : Կ'ըսի մարդը՝ պէտք է եղածէն աւելի իր ծախքերը սեպելով իր վիճակին ներած վայելքներէն կը զրկուի : Հայր մարդը՝ ծիծաղելի չբարկութեամբ, տարապայման ծախքերու ձեռք կը դարնէ ու կը փլի : Իսկ իւր նոյն մարդը՝ իր ծախքը իր վատկածէն համեմատելով՝ միշտ հանդիստ ու գոհ կ'աղբի :

Ինչպէս թեան համար ընդհանուր չափ մը չիկայ. փոս զի ամէն մարդուն վատկած մէկ չըլլալուն, ամէն մարդուն ընելիք ծախքն ալ ընդհանուր կանոնի մը տակ չի կրնար ինչալ :

Որովհետեւ մարդուս պիտոյցը շատերուն բուն պատճառը ու աղբիւրները իր բնաւորութիւնը կ'ըրբէրը ու աստիճաններն են, ուստի որչափ հնար է նե՛ պղտիկուց նայելու է որ չափաւորութեան բաւականաւորութեան ու պարզութեան սովորներ, չի թողնէր որ մըտելով՝ ունայնաւորու

թիւնը՝ ու փառասիրութիւնը սիրտերնուս վրայ տիրէ : « Մէկ գէշ սովորութիւն մը պահելը՝ երկու զաւակ ու պահելն սուղ կ'ըլլայ » կ'ըսէ Ուլթարտոս : Դարձեալ՝ « Սարգուն ուն » զանը որչափ չէն ըլլայ, մեւաւ ժաւ » մանակը՝ անտուկն ալ այնչափ դատարկ կ'ըլլայ » :

Դրամը և ուրիշ բարիքը թէպէտ գործածութեւն համար եղեր են, բայց այս գործածութեան նպատակը կըրկանակի է : Երբեմն մեզի վայելք տալու համար պէտք է որ ըլլայ, երբեմն ալ ուրիշ նոր բարիքներ հարցնելու համար : Իրեն ստրկուել միջոց մը ըլլալը հարստութիւնը վատնող չաղութիւնը աշխարհի վրայէն ալ նոյն չափով կտոր մը ճարտարութիւն կը բաւայ, ու միանգամայն այն ստակով բանվելը աղքատ գործաւորը իր վատկածէն կը զրկէ : « Եղած ատենը ամէնը մէկն » սպառել ու չեղած ատենն ալ

1 Հարստութեան ձախողութիւն. տպագր. ի տպարանի 3. Սիւսհիւսիսեան :

Ա.Չ.Գ.ԱՅԻՆ

Նախընթաց թիվերովս մեկուն մէջ խոստա-
յաւոր որ ազգիս երեւելի արանց մահուանէն ետեւ
անոնց վարուցը համառօտ պատմութիւնը գրել
լրագրերնուս մէջ, որպէս զի ազգին ըրած երախ-
տիքներնուն փոխարէն՝ անուններն օր մը ազգային
նոր պատմութեան մէջ անմահանալու մէկ միջոց
մը լլայ: Ուստի այսօր ալ կելիկեան գերապա-
տիւ մահտեսի Յարութիւն Վարային վարուցը հա-
մառօտ պատմութիւնը կ'ընենք:

Այս անձը հանգուցեալ մեծապատիւ մահտեսի
Պօղոս Վարայ կելիկեանին անդամակ որդին էր.
ծնաւ Այն քաղաքը 1797 յունիս 8 ին և երբոր իւր
հայրը կոստանդնուպօլիս փոխարէնց իւր տունը,
ինքն ալ ծնողացը իբրեւ հնազանդ որդի անոնցմէ
զատուել չուզելով՝ իւր ընտանեօքը հոս փոխադ-
րեց բնակութիւնը: Հանգուցեալ մահտեսի Պօ-
ղոս Վարայն՝ որ մեծահաւատ և առաքինասէր անձն
մի էր, իւր հայրական խնամածութեամբը որդին
ալ իրեն նմանցունելու մեծ ջանք ունէր: Եւ յի-
րաւի ջանքը զուրը չի գնաց, որովհետեւ մահտես-
սի Յարութիւն Վարայն գովելի վարուք իւր երի-
տասարդութիւնը անցունելէն ետեւ. երբոր այ-
րական հասակին մէջ հօրը տեղը յաջորդեց՝ որչափ
որ առիթ կ'ունենար իւր ազգին բարիք մը գործե-
լու՝ այն առիթը չէր փախցունէր. ուստի ոչ միայն
իւր առեւտրական ընդարձակ գործոց յաջողու-
թեամբը և հաւատարմութեամբը Սպարապաշտիս
պատուաւոր արքունի սեղանաւորներէն մէկն է-
ղաւ, այլ իւր ազգասիրական գործոց մեծութեամբ
բնալ ազգիս երեւելի Վարաներէն մէկըն համար
ուեցաւ: Դժբաղդաբար իւր քառասունը ինը տա-
րեկան հասակին մէջ անդամանելի հիւանդութի-
ւն մը գարով վրան և երկու տարի շարունակ այս հի-
ւանդութիւնը գոհութեամբ քաշելէն ետեւ՝ 1849
փետրվար 12 ին կնքեց իւր կեանքը բոլոր քրիստո-
նէական պարտաւորութիւնները կատարելով:

Յիրաւի մեզի մեծ ցաւ է այս բարեպաշտ Վ-
արային տարածած կորուստը, բայց առաւել մեծ
ցաւ կ'ըլլար մեզի՝ թէ որ իրեն տեղը յաջորդելու
արժանաւոր զաւկներ չի թողուր:

Հայաստանեայց Քաղաքացիական Դերոյ Անոյ և Ընկալից
նորա ի հնոց մինչև՝ յարբ մնացելով արքայ Վարային և Երեւե-
լեայն լայն և յետոյ, և նոյն արքայազորութեան պարագ-
րութիւնն է:

Հարգանքներովս:

ԵԿԵՂԵՑԻ Զ.

Աւագ Սայր եկեղեցւոյ երկու ասպարէզ հե-
ռաւորութեամբ ընդ արեւմտեան կայ գմբէթա-
յարկ և բոլորակալէն եկեղեցի մի կառուցեալ կից
ընդ որմով վեց սեամբ, և կամարքն ի վերայ վեց
սեանց խորանաձեւ խորագոյնս դարձուցեալք, և
գմբէթն ի վերայ կամարացս հաստատեալ: Երկայ-
նութիւնն և լայնութիւնն բոլորակաձեւ միաշափ է
12 զրայ: Եւ լուսամուտքն 6 եկեղեցւոյս և 12
գմբէթի են: Այլ և յահեակ խորանին գոն Բ. ա-
դատունք փոքրագոյնք ընդ որմով խորանին մի մի
լուսամուտք ընդ արեւելս: Եւ դռնն սուրբ եկե-
ղեցւոյ է մի ընդ արեւմուտս: Ի վերայ գրանա էր
յարտաքուստ այս արձանագիրս:

Ի. Յանուն Աստուծոյ կամ եղեւ իմ Հոգւանայ

1 Տէս թիւ 125 - 127.

տիկնաց տիկին (Երկու տող կտորած էր)
կուղարկու ի սուրբ Գրիգորի. որ հակառակ կայ
իմոց կամ յօտարաց ՅձԸ իցն նղոված է հոգւով և
մարմնով. ամէն:

Գարձեալ ի ներքոյ սորա գրեալ էր և այս արձա-
նագիրս:

ԻԱ. Կամարքն Աստուծոյ ևս Վահրամ ի իշխանայ
ի իշխան ետու զիմ որդւոյն զՎարայիս որդեւորին.
և գնեցի երկու կուղարկ զաւրագոյնին և զոր մա-
տին օշականց ետու ի սուրբ Գրիգորի. և որքան
եկեղեցիքս որ ունին՝ ի տարին երեք քառասուն.
արդ. եթէ որ հակառակ կայ յիմոց կամ յաւտարաց՝
նղովեալ եղիցի: Եւ Երեւելեան կողման ի վերն լու-
սամուրի գրեալ էր:

ԻԲ. Գրիգորիս Աստուծոյ յորձամ գաս փառաւք
հաւր ի նորոգել զերկիր, ողորմեա Գրիգոր ծառա-
յիս աստուծոյ: Ի հիւսիսակողման յորմն էր արձա-
նագրեցեալ:

ԻԳ. ՆՁԹ. Թուականիս. Ես Վարայիս հայոց
մարդպան որդի Գրիգորի և թոռն Վարայիս հա-
յոց ի իշխանայ, թէպէտ և անտես էի ի հաւրէ իմ
մէ յաղագս կրտսրութեան, այլ հարկեցայ ի ծնո-
ղական սիրոյն և շինեցի զայս հանգստարան հաւրն
իմոյ Գրիգորոյ և եղբաւր իմոյ Համգէլի և Հովն-
սեղայի. և շինեցի սենեակ երկու. սուրբ Ստե-
փաննոսի և զուրբ Գրիգորի. . . պղծման քահա-
նայից այս է, որ զամեն ուրբաթ ի սուրբ սրբոցն
մտանել. ժամն մի մաւր իմոյ Հոգւանայ արասցեն.
և զաբաթ իմ հաւրն Գրիգորոյ. և ի սուրբ Քր-
իստափոք զամեն ուրբաթ իմ քեռն Սեբասի. և ըզ-
աբաթ իմ եղբաւրն արեւ Համգէլի: Եւ առաջա-
ւորայն ուրբաթի և աղցոյն ուրբաթանայն փոխան՝
արձակ աւուրքն արասցեն ընդ աւր: Եւ եթէ
որ ի քահանայից եկեղեցեացդ զայդ ժամք խափա-
նէ, և կամ պղծագոյնայ և աւր անցնէ նղովեալ է-
ղիցի ի հաւրէ և յորդւոյ և ի սուրբ հոգւոյն. և
ՅձԸ. հայրապետացն: Եւ բաժին նորա ընդ յու-
գայի սատանայի եղիցի. կատարիչ գրոյս աւրհնեալ
ըլիցն ամէն:

ԵԿԵՂԵՑԻ Ե.

Աւագ Սայր եկեղեցւոյ կիսով ժամաւ հեռա-
ւորութեամբ ընդ հարաւակողմն ի ձորամիջի իւ-
րեւ զեղաւ երկարեցեալ ի վերայ Աստուծան գե-
տոյ և բարձրացեալ գմբէթովս ճանապարհաւ
ի վերայ քարաժայռի գոյ վանք մի (զոր տաճիկն
ըզգ զայնս կոչեն). սեւ և կարմիր քարամբ ի վե-
րայ Դ. սեանց կից ընդ որմով կառուցեալ: Գմբ-
էթն և հարաւային և արեւմտեան որմունքն և
կամարքն ամենայն պարագայիւք ի գետնաշարժու-
թենէ փրկեցեալք և ընդ մէջ լցեալք կան իբրեւ
զբլուր ինչ: Հիւսիսային և արեւելեան որմունքն
հանգերձ աւագ խորանաւ ամբողջապէս կան: Ի
չորս անկիւնան ընդ որմով գոն փոքրաքանակ կրկ-
նայարկք Ը. աւանդատունք անփնա մի մի լուսամբ-
տօք: Ի վերայ հարաւային որմոյն՝ որոյ կէսն միաց-
եալ կայ ընդ անկեան արեւելեան որմոյ խորանին՝
գոյ եղեր յիշատակագրութիւնք, բայց քարինքն
թափեցեալ գոյով մնացեալքն զոչինչ կարացին նը-
շանակել կիսակտուր լեալ: Երկայնութիւն տա-
ճարիս 12 զրայ. և լայնութիւն 8 զրայ: Ի ուսա-
մուտք 2 ի հարաւային և յարեւելեան որմունքս:
Ինչ արեւմտեան կողմն երեւի տեղի զանգակա-
տանն:

Ի ձախակողմեան ներքին տաճարատան գրան
վերայ գրեալ էր այս բան:

Պիտի շարունակութիւն:

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

Ժան Գիւլի քերթն անցած դարուն մէջ ծագեալ դաղկացոյ երե-
ւելի բանաստեղծներէն մէկուն ՏԵԼԷԻՔ անուն քերթուածը՝ Վէննա-
յի միաբանութիւնն Վ. Հ. Փիլիսոփայութեան վարդապետին
թարգմանութեամբ զարգարուն տպագրութեամբ տպուած, ու աղ-
նուատում Տեղեան Սիւրան շէքիպիին հարսանացը ինդակցութեան
նշան նուիրուած է սա գեղեցիկ ուղեբնովը:

ԱԶՆՈՒԱԿԱՆ ԵՒ ՄԵԾԱՇՈՒՄ Ի ԴՆԱՆ

Ի զուարթ մարգագ Նիւուէի Երեւան ժիւ պատանեակ
Ըզուրբ ծաղկանց իւր յըզէ զնկիւղարեան ըզմանակ
Աս իւր դրացի աշխարհին մեծ գիւշացանց Հոռաւիդ,
Որ ըզնախնին ըզգեցեալ ձեռի նոցուն ի շաւիլ:
Զի յապարկեղ Դու եկեր՝ Արարատեան սիրտ զննայ.
Զանձն Գո, Գալ, նըշնարա իւր հայեւոյ յայս ընծայ:
Քեւ բարգաւաճ՝ մեր ազգիս և հայակապ Գո զարմին
Եղիցին փառք. Ասորոյ նոր, ծագեցեալ նոր խմորին:
Գանձ մեծագին հայրենեաց՝ բարձրութիւն սուրբ դուստին.
Այնիւ գարնան, որպէս Գոյն, ապիւ և և հունձը հաւաքի:
Թէպէտ սա նուէրը նոյն իսկ հարսանեաց օրերը իրեն ընծայուե-
ցաւ, բայց անոր օրինակը մեր ձեւքը նոր հասած ըլլաւուն, հիմայ կը
ծանուցանենք:
Քերթուածին գերազանցութիւնն աղէկ մը հասկնալու համար
ըզուրի և արուեստին հմուտը բնագոյն խորիւրդ, անոր հայրեն
թարգմանութեանն ալ սկիզբէն քանի մը տղա բան տեսնելը հակընա-
լու ու դատելու չափ, կ'օգտէ:

ՏՈՒՐԻՍԻ

ԴՈՒՐ, որ զայն հասակի՝ ուր թօթափն տիւր տընդ,
Գրաւէք լոկ ըզնորհս եւ զանազ վարս ողջ անեղծ,
Որոյ միտք վաղահասը, զի գիտել մեա նըլըւրին,
Համարին բերկրութիւն, թէ՛նդ պատշաճ պարտ ինչ կըրթին,
ԶՏօթիթիայն՝ նուիրական, զին պատմութիւն լըւարուն,
Ուր վեպ պարզ, անպաշտօն, եւ ոչ սէր կամ փառք արագ:
Սոյ արդար, ապիւ ծնող, սրբութիւն ցածուն, բարեբար,
Գուց իւր լոկ առ իւր Տէր, առ իւր որդի, առ սրեալ:
Այս, չեն ձեզ օտար լուսութիւնք որ սոս գրենին,
Ընթերցելը, յոյն արկէք դու ըզՏօթիթի առ տընին:

(ԳԻՆ 12 ՂՈՒՌՈՒՇ)

ԶՈՒՆԻՆԵՐՈՍՈՒԹԻՒՆ

Սպանիայի սաւերորդ անուններու խիստ ցան-
կացող են ինչպէս նոյն ազգին պատմութեւ և բար-
քին ծանօթ եղող անձանց յայտնի է այս: Այդ
օր մը սպանիայի մը Վիստանայի կողմերը ճանա-
պարհորդութիւն ընելու ժամանակը՝ գիշեր ատին
մէկ սղոյի գիւղ մը հասաւ ուր տեղ միայն մէկ լը-
քանա մը կար. որովհետեւ կէս գիշերի մօտ էր՝
բոլոր լըքանային մարդիկը դուռները գոցեց՝ գոյցեր
պառկեցին: Ուստի սպանիայի սկսաւ լըքանային
դուռը չարել, առանց մէկ ձայն մը լսելու՝ իսկ մը
ժամանակ չարելէն զին վերջապէս տեսաւ որ լըքան-
աճին պատուհանը բանալով գլուխը դուրս հանած
իրեն կը հարցունէ թէ՛ ով է ինքը և ինչ է ինչը-
րածը. ևս, կը պատասխանէ սպանիային, Տոն Ղու-
ան. Բեռնո. Հիւսանիոյ, Ուստիկո Ալփոնսո
ուր Վ իլլա Նօլա Սալաֆրոյի Տուբայ. Սանթիակո
Ալփոնսոյի Մարտին Եմ. և կը կամով գիշերս հոս
անցնէ. ողորմեա ինձ տէր, կ'ըսէ լըքանաճին, ևս
այդքան մարդու բաւական անկողին չունիմ, իմ
ուռնեցած երկու անկողինս ո՞ր մէկիդ պիտի օգտէ.
Ի զուր սպանիային կ'աշխատէր անոր հասկընէ-
լու թէ՛ այն բոլոր անունները մէկ մարդու մը ա-
նուն է. լըքանաճին առանց անոր խօսքերուն ուն
կնքութեան ընելու կը գոցէ պատուհանը և կը
մանկայ ներս. և կը իլլա ուր ինչ՞դ սպանիային
իւր անտիպութեանը պատիւը կը մինչեւ առա-
ւօտ առանց անկողնի և օթեւանքի մնալով:

Ի ԴԻՄԱՅ ԱԶԳԻՆ

ՎԵՐԱՏԵՍՈՒՇ

ՍԻՄԵՆ ԱՂԼԵՆ:

Ի Պիտի նոր խան:

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԶՈՒՆԱՆՈՒ ՄԻՒՀԻՆՏԻՍՏԱՆ

Դ բոլորովին ձեռքը քաշելը՝ մարդուս
Դ պարծանք մը չէ: Այսինքն անասուն
Դ ներուն գործն է. նաև մէջերէն քիչ
Դ մը խելք ունեցողները՝ ուրիշ կեր-
Դ պով կը վարվին: Նախատես ու բա-
Դ նական մարդուն նշանը՝ սա պէտք է
Դ ըլլայ, որ ամէն պարագայի մէջ, ա-
Դ ունց բանաւոր նպատակի ծախք չը-
Դ նէ. ինչպէս որ անտեսութիւնը մե-
Դ ղի կը խրատէ:

Ինչպիսի մարդը՝ շատ հոգեւոր ազատ
կ'ըլլայ: Պարտք չունեցող մարդը՝ մէ-
կէն ալ չի վախնար. ու թէ որ ունե-
ցածը քիչ ալ ըլլայ, գոնէ այն քիչը ի-
րը եղած կ'ըլլայ: Ի բոլոր աշխատան-
քը՝ ուրիշներուն անյագ աչքը չըզնե-
լու համար չէ, այլ իր ու իր ընտա-
նեացը բարեկեցութիւնը աւելցնելու
լու համար կ'ըլլայ: Իրան ժողովա-
լութիւնները անպատու չեն մնար. և
թէպէտ առջի բերանը քիչ մը գըժ-
ուարութիւն կը քաշէ, բայց ետքը իր
վիճակը չաւայ մարդուն վիճակին հետ
բաղդատելով երբոր կը տեսնէ որ ծու-

լութիւնը՝ պարտքերը՝ ազատութիւնը
ու յուսահատութիւնը անոր բոլոր
առեր են, գոհ կ'ըլլայ իր վիճակին վը-
րայ, ու իր չափաւորութեանը պրոս-
ղը եղած բարեկեցութիւնն ու հան-
գըտութիւնը աւելի յարգ կ'ըստա-
նան աչքին առջին:

Պիտի շարունակութիւն:

Ե. Մ. ՋՈՐՏԱՆԱՆ

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԽՈՐՀԻՄԱԾՈՒԹԻՒՆ

ՊԼՈՒՏԱՐԻԵՍ

Դ.

Ես ինչո՞ւ մարդոց պէս չեմ մըտա-
ծեր, որ բարեկամութեան միմիայն
ուղղութիւնն ու պիտոսութիւնը կ'ըն-
դունին: Երբոր կը տեսնեն որ մէկը
այս կողմութեամբ մէջ քիչ մը վայել-
չութիւն ալ կը մտցնէ կոր, իսկոյն ա-
նկիւղ չողորմութիւն տեղ կը գնեն, և ի-
րենց այս կարծիքը հաստատուել փորձ

ալ ունենցած կը համարին, բարեկամ
ըսածը անժպիտ ու դաժան երեւնա-
լու չէ, ու բարեկամութիւնը խոտու-
թեամբ ու գառնութեամբ յարգելի
չըլլայ: Վայելչութիւնն ու ազնուու-
թիւնն ալ անոր ընկերներն են, բայց
քաղցր ու անորժելի կերպով մը. չը-
նորհքն ու զուարճութիւնն ալ միշտ
անոր հետ կը բնակին: Երբեք բա-
րեկամութիւնը կենաց հետ խառնեց,
որ կեանքը զուարթ, զուարճալի ու
քաղցր ըլլայ:

Ե.

Գովութիւն տուողը մէկէն ի մէկ
չողորմութիւն համարելու չէ: Գովութիւն
բարեկամութեան անպատշաճ գալու
բան մը չէ. պատեհ ժամանակը յան-
գիմանութիւնը ինչպէս կը գործածէ
նէ, գովութիւնն ալ անանկ կրնայ
գործածել. կամ մանաւանդ տրտում
բնաւորութիւնը ու պախարակելու
յօժարութիւնը բարեկամութեւն օգտ

է, ու կենաց կողմութիւնը կը թու-
նաւորէ. բարեկամ մը երբոր կը տեսնէ
որ իր բարեկամը բարեբոլորութեամբ
անխտիր մը իր ըրած աղէկ բաները կը
գովէ կոր, անոր տուած խորաններն
ալ ետքը յօժարութեամբ մոտիկ կ'ընէ:
Առանց վշտանալու անոր յանդիմա-
նութիւններուն կը լսէ, վստահ զի գի-
տէ որ եթէ պէտք չըլլայ զինքը չի
յանդիմաներ, ու զինքը գոված ժա-
մանակն ալ ուղեւոր կ'ընէ: